

Մամուլի հաղորդագրություն

ՎԱՐՁԱՏՈՒ ԵՒ ՎԱՐՁԱԿԱԼ ՀԱՄԱՏԵՂ ՈՒԺԵՐՈՎ

Վեոլիա Ջուր ՓԲԸ-ում ՀՀ ԷԵԲՊՆ-ի Ջրտնտեսությունի տեղի նախագահ Արսեն Հարությունյանի մասնակցությամբ կայացավ աշխատանքային խորհրդակցություն, նվիրված Վարձակալի 2017թ. գործունեության արդյունքներին ու առաջիկա ծրագրերին:

Այսպես, անցյալ տարվա ընթացքում Վեոլիա Ջուր ընկերությունը Վարձակալության պայմանագրով նախատեսված պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում իրականացրել է շուրջ 1.9 մլրդ դրամի ներդրումներ: Վերը նշված ծրագրից դուրս ընկերությունը լրացուցիչ կառուցել է 12 000 գծմ ընդհանուր երկարությամբ ջրագծեր և 1200 գծմ կոյուղագծեր, վերակառուցվել է 7 գլխամասային կապտաժային կառուցվածք: Վարձակալ ընկերության տվյալներով՝ սպասարկման տարածքում մատակարարվող խմելու ջրի որակի համապատասխանությունը հանրապետությունում գործող ջրի որակի պետական ստանդարտներին կազմում է 98 %:

Ընթացիկ աշխատանքներին զուգահեռ՝ ընկերությունը նաև ակտիվորեն պայքարել է ապօրինությունների դեմ: Անցյալ տարվա ընթացքում ընկերության աշխատակիցները արձանագրել են գործող կանոնների խախտման այդպիսի 2510 դեպք: Հայաստանի մարզերում ջրամատակարարումն ավելացել է միջինը 1.2 ժամով: Ջրամատակարարման բարելավման և ջրի հաշվառման նպատակով ընկերությունը շարունակել է նոր ջրաչափերի տեղադրումը և իր գործունեության առաջին տարվա ընթացքում տեղադրել 58 000 նոր ջրաչափական սարքեր:

Ներկայացրած տվյալներին ծանոթանալուց հետո՝ Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արսեն Հարությունյանը նշեց, որ «Պետության և վարձակալ ընկերության հիմնական նպատակը պետք է լինի մեկը՝ ապահովել սպառողների իրավունքների լիակատար իրացում և սպասարկման բարձր որակ» եւ հույս հայտնեց, որ սպառողները հնարավորինս շուտ կզգան ոլորտում տեղի ունեցող բարեփոխումների ազդեցությունը:

Այնուհետև նա անդրադարձավ Կոմիտեի կողմից հանրապետության տարբեր բնակավայրերում ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի վերակառուցմանն ուղղված տարաբնույթ ներդրումային ծրագրերի իրականացմանը:

Այսպիսով, ընթացքի մեջ են Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Արմավիրի, Լոռու, Շիրակի մարզերի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման, ինչպես նաև՝ «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից չսպասարկվող 6 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ծրագրերի նախագծման աշխատանքները: Դրանք ընդգրկում են Լոռու մարզի Ուռուտ և Ագարակ, Արմավիրի մարզի Մարգարա, Սյունիքի մարզի Խնածախ, Կոտայքի մարզի Արզական, Գեղարքունիքի մարզի Լճավան համայնքները: Ծրագրի իրականացման արդյունքում Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի սպասարկման տարածքում կընդգրկվեն չսպասարկվող բնակավայրերի շուրջ 7700 նոր շահառուներ:

Ա. Հարությունյանն ընդգծել է, որ չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքները, որպես առաջնահերթ խնդիր, կքննարկվեն հետագա ներդրումային ծրագրերի շրջանակներում՝ խնդրին փուլ առ փուլ լուծում տալու նպատակով: